

THE FORMING OF CRITICAL THINKING DURING THE TEACHING

A. S. Safaryan

The topic «The forming of critical thinking during the teaching» is modern pedagogical technology – the forming of the critical thinking and its usage during the teaching.

ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ «ԿԵՐՊԱՐՎԵՍ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Թ. Յ. ԿՈՏՈԼՎՅԱՆ

ԳՊՀ դասախոս

Արդի ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության էական բարեփոխումները և առաջանցիկ զարգացումը դառնում են առավել անհրաժեշտ ու անխուսափելի: Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում ու հանրակրթական ուսումնական հաստատությունների և հանրակրթական առարկաների նկատմամբ վերաբերմունքի ճշգրտում:

Ինչպես յուրաքանչյուր հանրակրթական առարկայի, այնպես էլ կերպարվեստի յուրացման համար պահանջվում է երևան հանել, աշակերտների մեջ ձևավորել և այնուհետև զարգացնել իմացական գործունեության մի շարք տեսակներ: Հետագայում իմացական գործունեության պարզ տեսակները, մտնելով գործունեության բարդ կառուցվածքի մեջ, աստիճանաբար կորցնում են իրենց ինքնուրույնությունը և դառնում միջնորդավորված:

Կերպարվեստի դասավանդման իրականացման հիմնական ձևերն էլ պետք է միտված լինեն իմացական գործընթացների՝ ընկալման, ուշադրության, երևակայության, դիտողունակության /պատկերավոր, գեղարվեստական/ և տարածական մտածողության զարգացմանը: Որպեսզի դասավանդումն առարկայական դաշտում լինի արդյունավետ, անհրաժեշտ է տարբերակել իմացական գործընթացների տարատեսակները, իրականացման ուղիները և «կերպարվեստ» առարկայի միջոցով դրանց զարգացման մեթոդները:

Արտաքին միջավայրից ստացած տեղեկատվության 90%-ը բաժին է ընկնում տեսողական ընկալմանը: Այդ պատճառով էլ ամենից շատ կարևորվում է տեսողության դերը մարդու զգայարանների համակարգում: Իսկ տեսողականությունից և ընկալումից էլ սկիզբ է առնում գեղարվեստական դիտողականությունը: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում երեխայի դիտելու և ճիշտ ընկալելու կարողությունը զարգացնել վաղ մանկական հասակից: Լ. Վ. Զանկովի և նրա աշխատակիցների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տարրական դասարաններում ուսուցման ընթացքում կարելի է զգալի չափով զարգացնել

դպրոցականների այդ կարևոր որակը: Որոշ գիտնականներ գտնում են, որ եթե կրկնությունը ուսման մայրն է, ապա դիտումը կարելի է համարել գիտելիքների իմաստավորման ու մտապահման մայր:

Երեխաները դպրոց են գալիս արդեն ընկալման զարգացման բավականաչափ գործընթացներ ունենալով, սակայն ուսումնական գործունեության ընթացքում նրանց ընկալումները հիմնականում սահմանափակվում են առարկաների ճանաչմամբ և դրանց ձևերն ու գույները անվանելով: Դիտման ընթացքում անհրաժեշտ է, որ ուսուցիչը օգնի երեխաներին ուշադիր զննել առարկաները, տրամաբանել և ճիշտ հասկանալ դրանց կառուցվածքը: Ընկալման հետևանքով առաջացած տեսողական զգացողության հաստատմանն ու իրականացմանն ուղեկցում է վերապատկերման կարողության զարգացումը: Դիտելու կարողությունը բավականին զարգացած լինելու դեպքում երեխան ունենում է անձնային հատուկ որակ՝ դիտողականություն: Կոլտուշիում գլխավոր շենքի ճակատին Ի. Պ. Պավլովը փորագրել էր տվել «ԴԻՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառը, դրանով իսկ իր աշխատակիցներին հիշեցնելով, թե ինքը որքան բարձր է գնահատում հենց այդ հատկությունը: Բոլոր մեծ հետազոտողները տիրապետում են առարկայի /նյութի/ վրա միտքը կենտրոնացնելու այդ բացառիկ ընդունակությանը:

Նկարչությունն իբրև ուսումնական առարկա սկսվում է իրազմնությունից և «աշխարհաճանաչողությունից», այնուհետև հանդես է գալիս որպես աշխարհի գունային հարստության, երփներանգության և ճանաչողության վերարտադրում: Տեսողական զգացողության հարստացմանն ու նրբացմանը ուղեկցում է վերապատկերավորման կարողության զարգացումը: Հետևաբար նկարչության ուսուցչի աշխատանքի կարևորությունը կայանում է նրանում, որ ուսուցիչը աշակերտներին կողմնորոշի ոչ միայն նայել, այլև տեսնել, ոչ միայն դիտել, այլև որոշ իմաստով ուսումնասիրել ու վերլուծել օբյեկտը: Իրազմնության տվյալ աստիճանում երեխայի ուշադրությունը պետք է կենտրոնացնել նկարելու առարկայի տարբեր կողմերի ձևերի ու արտաքին հատկանիշների վրա: Իրականության ընկալումների ներքին տրամաբանության համապատասխան՝ ուսուցիչը պետք է ստիպի աշակերտներին հայեցողական-զգացողական տպավորումներից ու պատկերացումներից անցում կատարել դեպի գիտակցական-նպատակային դիտողությունները՝ մտապատկերային հիմք ստեղծելով նրանց հետագա «վերարտադրման» համար:

Կրտսեր վաղ հասակում երեխաները չեն կարողանում սիստեմատիկ վերլուծության ենթարկել ընկալվող առարկաների հատկությունները և որակները: Նկարելու համար սափորը արագ զննում են, տալիս անունը և անմիջապես նկարում, այլևս սափորի վրա ուշադրություն չդարձնելով: Նրանք շատ արագ են ավարտում աշխատանքը: Նման տվյալներ են ստացվում նաև գույնով աշխատելու ժամանակ, երբ երեխաներից պահանջվում է վերարտադրել սափորի գույնը: Աշակերտները ճանաչում են գույները, բայց նրանք նկարում են առանց նայելու, որովհետև նրանց մոտ դեռ բավականաչափ զարգացած չի դիտողականությունը: Կերպարվեստային գործունեության ժամանակ աշակերտները ստանում են այս կամ այն առաջադրանքները, իրենք ու երևույթները զննելու հնարներն ու մեթոդները: Գործունեության այդ տեսակը, որն էլ անվանվում է դիտում, ինտեսիվորեն է ձևավորվում և զարգանում դպրոցական ուսուցման ընթացքում՝ կեր-

պարվեստի առարկայական դաշտում, հատկապես «նկարչություն բնօրինակից» պարապմունքների տիպի դասավանդման ժամանակ, որոնք են նատյուր-մորտները, ճեպանկարները, դիմանկարները և բնանկարները /էտյուդներ/: Հանձնարարված առաջադրանքները աշակերտները դիտելուց, ուսումնասիրելուց, համեմատելուց, համապատասխան չափումներ կատարելուց հետո սկսում են նկարել: Տարիքային առանձնահատկություններից ելնելով, մեթոդապես լավ գիտակ մանկավարժը ընտրում է համապատասխան մեթոդը: Հարկ եղած դեպքում, երբ հանձնարարված նյութը համեմատաբար բարդ է, ուսուցիչը բացատրում է գրատախտակին, այնուհետև մաքրում նկարվածը, որպեսզի երեխաները չարտանկարեն գրատախտակից: Երբ երեխաները արտանկարում են գրատախտակից, պատկերազարդ գրքերից կամ այլ նկարներից, ապա նրանց մոտ համեմատաբար թույլ է զարգանում ճանաչողության այդ շատ կարևոր որակը՝ դիտողականությունը: Փորձը ցույց է տվել, որ երեխաները որքան քիչ արտանկարեն նկարներից ու առավել շատ օգտվեն բնությունից, այնքան ավելի դիտողունակ կլինեն: Եվ այստեղ տեղին է հիշել մեծ վարպետ Մ. Սարյանի խոսքերը. «Ամենամեծ ուսուցիչը բնությունն է, զնացե՛ք և սովորե՛ք նրանից»: Եվ այսպիսով, դիտողականության զարգացումը իրականացվում է հետևյալ փոխհարաբերությունների և հատկանիշների համագործակցությամբ.

- դիդակտիկ նյութի առկայություն,
- երեխաների գործունեության մշտական ակտիվացում,
- մարդ - բնություն կապի ամրապնդում,
- ժամանակակից ուսուցման մեթոդների կիրառում,
- գեղագիտական ճաշակի դաստիարակում:

Գեղարվեստական դիտողականությունը սերտորեն կապված է գեղարվեստական մտածողության հետ, որը սկիզբ է առնում երեխաների համար սովորական պարապմունքներից և մանկական պրակտիկ խաղերից: Գեղարվեստական մտածողության հիմքերի եռյակը սկզբում հանդես է գալիս գեղարվեստական գործունեության այն երեք ձևով, որոնք երեխաներին պրակտիկորեն հայտնի են դպրոցից շատ առաջ, միայն թե երբեք չեն էլ գիտակցել որպես գեղարվեստական գործունեություն: Ամեն մի երեխա իր խաղերի ընթացքում ինչ-որ բան կառուցում է /տներ, ավազից ամրոցներ, քաղաքներ՝ խորանարդիկներից/: Ամեն երեխա ինչ-որ բան նկարում է, պատկերում /ոչ միայն թղթի վրա, այլև կավիճով կամ մեխով՝ պատի կամ ասֆալտի վրա/ և վերջապես ամեն մի երեխա խաղում է և այդ ընթացքում զարդարում է և՛ իրեն, և՛ իր բնակարանը, իր անկյունը, իր խաղալիքները:

Ահա այդ երեք մանկական զբաղմունքները՝ կառուցումը, պատկերումը, զարդարումը, գեղարվեստական մտածողության՝ կոնստրուկտիվ, պատկերային և դեկորատիվ՝ երեք տարրերի /ոլորտների, ձևերի/ դրսևորման ձևերն են: Այնուհետև այդ ձևերը անջատվում են խաղից և դառնում գեղարվեստական գործունեության /ուսուցման/ ձև: Գեղարվեստական գործունեության այս երեք տիպերն էլ հանդես են գալիս միասնական ձևով: Այդ մանկական զբաղմունքները այնուհետև ուղղորդվելու են դպրոցում գեղարվեստական ուսուցման ընթացքում, որն էլ իր վրա է վերցնում կերպարվեստ առարկան: Դպրոցում որպեսզի առարկայի դասավանդումը ինքնաձայնակ չլինի, անհրաժեշտ է, որ գեղարվեստական

մտածողությունը, որով իրականացվում է գեղարվեստական գործունեությունը և վերջիններս էլ շաղկապվում են դիտողականության հետ, իրենց զարգացմամբ զարգացնեն մի այլ շատ կարևոր որակ՝ ուշադրությունը: Ուշադրության տեսակներն են՝ կամածին, ոչկամածին, հետկամածին և այլն: Երեխաները, որոնք մոր են ընդունվում դպրոց, չեն կարողանում ուշադրությունը նպատակասլաց կերպով կենտրոնացնել երևույթների և առարկաների վրա, որոնք այդքան էլ հետաքրքրություն չեն ներկայացնում: Նրանք ուշադրությունը կենտրոնացնում են այն երևույթների, առարկաների վրա, որոնք աչքի են ընկնում իրենց անսովորությամբ ու պայծառությամբ: Նկարելու ժամանակ արագ նկարում և վերջացնում են այն առարկաները, որոնք գեղեցիկ են, գունագեղ նախշավորված, ունեն հետաքրքիր կառուցվածք, իսկ մյուսների վրա ուշադրություն չեն էլ դարձնում, այսինքն՝ կրտսեր դպրոցականի մոտ զարգացած է ոչ կամածին ուշադրությունը: Եթե «ոչ կամածին» ուշադրություն է կոչվում ականայից, ինքնաբերաբար առաջացած այն ուշադրությունը, որը մարդու համար առաջանում է անսպասելի գրգռիչների կամ մարդու համար նշանակալից ու հուզական արձագանք առաջացնող գրգռիչների ազդեցության տակ, ապա կամածինը՝ մարդու գիտակցական կենտրոնացումն է որոշակի օբյեկտի, ինֆորմացիայի վրա՝ որոշակի կամային ջանքերի գործադրմամբ: Անհրաժեշտ է ամեն դասի հենց այդ կամային ջանքերը գործադրել երեխաների մոտ՝ կամածին ուշադրությունը զարգացնելու համար: Քանի դեռ երեխաները իրենց ուշադրությունը չեն կենտրոնացրել տվյալ օբյեկտի կամ առարկաների վրա, նրանք չեն կարողանա նկարել ոչ մի հանձնարարված առարկա /նատյուրմորտ, բնություն, դիմանկար/: Այդ պատճառով ամեն կերպարվեստի դասի ժամանակ անհրաժեշտ է տարբեր մեթոդներով զարգացնել կամածին ուշադրությունը: Կամային այս որակի զարգացումը առանցքային է ոչ միայն որպես իմացական գործընթաց, այլև շաղկապվում է դաստիարակության հետ: Եվ պատահական չէ, որ մենք ասում ենք. «Ասա, թե ինչի վրա ես դու ուշադրություն դարձնում, և ես կասեմ, թե դու ով ես»: «Երեխայի համար ամենակարևորը ոչ այն է, թե ինչ է նրան տրվում, այլ այն, թե ինչպես է տրվում: Եթե նրա ուսուցման մեջ մենք հոգի ենք դնում, դա շատ ավելի կարևոր է, քան եթե մենք նրա մեջ դնում ենք տրամաբանություն: 6-7 տարեկան աշակերտներին ընդունող և այդ դասարանը մինչև 14 տարեկան տանող ուսուցիչը իր ողջ դասավանդումը պետք է ներծծի արվեստի նկատմամբ սեր ծնող ուժերով՝ գեղեցկությամբ ու սիրով լի գեղարվեստական ձևերով», - այսպես է արտահայտվել Ռուդոլֆ Շտայնե-րը:

Ուսուցման ընթացքում մյուս գործընթացներից ոչ պակաս կարևոր է հիշողության զարգացումը: Հիշողությունը մարդու փորձի մտապահումը, պահպանումը և հետագա վերարտադրումն է: Շատ տպավորիչ է եղել անգլիացի նկարիչ Ռեյ-նոլդսի տեսողական հիշողությունը: Նա նկարվող մարդուն խնդրել է միայն մի անգամ նստել, որոշ ժամանակահատվածում զննել է նրան, որից հետո նկարել հիշողությամբ: Անձի գործունեության մեջ իշխող ակտիվությամբ, հիշողությունը բաժանվում է շարժողական, հուզական, պատկերային և բառատրամաբանական: Պատկերային հիշողությունն է, որ պետք է զարգացվի կերպարվեստային գործունեության ընթացքում: Անկախ նրանից, թե դասը «բնականից նկարչու-թյուն» է, «թեմատիկ», «դեկորատիվ», կամ էլ «գրույցի դասաժամ», անհրաժեշտ

է ուղղորդող գործունեությունն ծավալել կամաժին հիշողության զարգացման համար: Տեսողական հիշողության զարգացման համար բավականին օգտավետ մեթոդ է, երբ դասարանում արդեն նկարած, ավարտած նատյուրմորտը հանձնարարվում է տանը նկարել հիշողությամբ: Կամ էլ՝ նմանատիպ մեթոդ օգտագործվում է էքսկուրսիաներից, զբոսանքներից և էտյուդներից վերադառնալուց հետո. երեխաներին հանձնարարվում է նկարել հիշողությամբ: Ջրոսանքի ժամանակ, եթե ցանկություն կա մտապահել հրաշալի բնանկարը, ապա անհրաժեշտ է այն դիտել մի քանի անգամ անընդմեջ՝ փակելով և բացելով աչքերը, միաժամանակ տեսածը համեմատելով նրա հետ, ինչ երևում է ներքին տեսողության էկրանի վրա: Մի փորձից մյուսը տեսողական տպավորությունը ավելի է պայծառանում, հարստանում, հստակեցվում՝ սկսում է գործել հիշողության մարզվածությունը: Հարկավոր է միշտ և ամենուր սովորեցնել մարզել տեսողական հիշողությունը: Կարճատև ցուցադրումները, երբ երեխաներին հրահանգում ենք ուշադիր նայել, որովհետև առարկան, կամ մի քանի առարկաներ, դիտելուց հետո վերցնելու ենք և նատյուրմորտը նկարելու են առանց առարկաները դիտելու, երեխաները նկարում են մտապահված նատյուրմորտը բավականին հաջող: Հանձնարել նկարիչ Հ. Այվազովսկին կատարելության հասցնելով իր «տեսողական ապարատը», բոլոր կտավներն ստեղծում էր հիշողությամբ:

Ջրույցի դասաժամերին նույնպես կարելի զարգացնել այդ շատ կարևոր որակները: Ուսուցիչը աշակերտներին բաժանում է նկարիչների նկարների վերատպություններ, երեխաները ուշադիր զննելուց հետո դարձյալ հանձնում են ուսուցչին, այնուհետև խորանարդի մեթոդով պատասխանում հարցերին: Եթե դասավանդվող դասարանը համապատասխանում է կրտսեր տարիքին, ապա նպատակահարմար է կիրառել «խաղ գրատախտակին՝ հիշողությամբ» աշխատանքը:

Վերը նշված իմացական գործընթացներից բացի, կերպարվեստի դասը առանձնանում է իր զարգացնող հատկությամբ և մի առավել շատ կարևոր գործընթացով, որն էլ կոչվում է երևակայություն: Ստեղծագործական երևակայության զարգացման համար կերպարվեստի ծրագրի սկզբունքներից է իրականի և ֆանտաստիկի միասնությունը: Երևակայության, ստեղծագործական մտածողության և դրանցով էլ անձնավորության զարգացմամբ պայմանավորված է գեղարվեստական խնդրի գործունեությունը: «Ցանկացած գեղարվեստական ստեղծագործություն ունի 2 թև՝ իրականությունը և ֆանտազիան, և միայն մեկով ոչ մի արվեստ չի կարող բարձրանալ», - նկատում է Բ. Նեմենսկին:

Երևակայությունը հանդիսանում է երեխայի անձի նորմալ զարգացման կարևոր պայման, այն օրգանապես ներհատուկ է երեխային և անհրաժեշտ է նրա ստեղծագործական հնարավորությունների ազատ դրսևորման համար:

Վ. Բրուշլինսկին գտնում է, որ երևակայությունը մտածողության մի ձև է: Ցանկացած խնդրի լուծման համար ստեղծագործական մոտեցումը այն ժամանակ է ի հայտ գալիս, երբ ուսուցիչը ցուցադրում է շատ տարբերակների ու հնարների լուծումներ, ցուցաբերում ոչ սովորական մոտեցում:

Ստեղծագործական երևակայության լիարժեք զարգացմանը հասնելու էֆեկտիվ լուծման հնարավորություններից մեկը կերպարվեստային գործունեության մեթոդական դասավանդումն է դպրոցում դրված՝ գիտական մակարդակի վրա:

Դրա զարգացման պայմաններից է իմանալ՝ դիտել, տեսնել շրջապատը, նկատել այն, ինչը ոչ սովորական է, զննել գեղեցիկը և ապրել նրանով: Բայց շատ հաճախ աշակերտներին, իբրև ուսումնական պարապմունք, դպրոցում տալիս են արտանկարելու պատրաստի նկարներ կամ շարունակ հանձնարարում են նկարել «Ազատ թեմա» վերնագրով աշխատանքներ: Այս աշխատանքները ոչ միայն չեն խթանում երևակայության զարգացմանը, այլև կասեցնում են այն:

«Երևակայությունը մկանների նման է, պետք է մարզել,- գրում է Ա. Ժուկովան: Բայց մենք, չգիտես ինչու, դրա համար հոգ չենք տանում, մենք կարծում ենք, որ եթե երեխայի երևակայությունն աղբյուրի պես հորդում է, ապա ոչ մի տեղ չի կորչի, այդպես էլ կմնա, ինչպես քնած դժխուհին՝ բյուրեղապակյա դագաղում: Իսկ հետո, երբ մեզ հարկավոր լինի, կարթնացնենք: Մենք բոլոր ուժերը, ուսուցանելու և դաստիարակելու մեր ամբողջ համակարգը կենտրոնացնում ենք երեխայի տրամաբանական մտածողությունը ձևավորելու, աստիճանաբար զարգացնելու ուղղությամբ: Իսկ երևակայությունը այդ նույն ժամանակ նվազում է, թուլանում, մարում: Ու հանկարծ սթափվում ենք՝ որտեղից են մեր կյանքում այսքան շատ սառը, ցածր, պրոզայիկ, անտանելի, տաղտկալի, թեկուզ և ճիշտ մտածողությամբ մարդիկ»:

Ստեղծագործական երևակայությունը պարզապես չի վերարտադրում այն, ինչ տրված է եղել մարդու ընկալումներով, նա հեռանում է անմիջականորեն տրվածից, ստեղծում է նոր ոչ ակնհայտ արդյունքներ: Կերպարվեստի ուսուցիչը ստեղծում է պրոբլեմային իրադրություն և երեխաների մոտ առաջ է բերում կամածին երևակայություն: Նա կերպարվեստի դասն անցկացնելու մեթոդական հագեցվածությամբ կարողանում է հասնել նրան, որ կրտսեր և բարձր տարիքի երեխաները ստեղծեն նոր մտապատկերներ և վերարտադրեն թղթի վրա: Կերպարվեստի դասերի անցկացման լավագույն միջոց է համարվում շրջագայությունը բնության գրկում: Ուսուցիչը երեխաների ուշադրությունը սևեռում է խոտերի, ծաղիկների, սարդոստայնի փայլի, ցողի կաթիլի, թիթեռների թևերի և ամպերի վրա, ինչի հետ կարելի նմանեցնել ամպերի պատկերները, ցողի կաթիլը և այլն: Նման հարցադրումով պարապմունքների ժամանակ զարգանում է երեխաների ասոցիատիվ մտածողությունը: Հաջորդ պարապմունքների ընթացքում ստեղծագործական երևակայության զարգացման համար կարելի է հարցադրումներ անել, թե ինչ են շշնջում տերևները, ինչի մասին է երգում քամին, կամ էլ ինչ է պատմում անձրևը:

Բացի այն, որ երեխաները տալիս են ոչ ստանդարտ պատասխաններ, պատմում, ստեղծագործում են բանաստեղծություններ, նաև կատարում են էսքիզներ: Դպրոցում անցկացրած փորձերը ցույց են տվել, որ երեխաները շատ հաճույքով են նկարում այն թեմաները, որոնք մինչ այդ հանձնարարված չեն եղել և պարունակում են ֆանտաստիկ վերնագրեր: Երևակայության զարգացման վրա շատ բարվոք է ազդում այն մեթոդը, երբ նկարչության դասին օգտագործվում են հոգեբանության մեջ շատ հայտնի համադրման եղանակները: Գոյություն ունեն համադրման հետևյալ եղանակները՝ հիպերբոլիզացիա /չափազանցում/, ագլյուտինացիա /կցականություն/, սրում և տիպականացում: Ագլյուտինացիան այն եղանակն է, երբ մարդն /աշակերտը/ ամենատարբեր ձևերով համադրում է կյանքում չմիացվող առարկաներից, առանձին հատկություններից կազմավորված

մտապատկերներ և ստեղծում համակցվող մտապատկերներ: Այսպես են ստեղծվել ջրահարսի, կենտավրոսի պատկերները: Երբ այս եղանակը կիրառում ենք ստեղծագործական դասերի ժամանակ, երեխաները նկարում են ամենատարբեր, հետաքրքիր նկարներ: Այնուհետև իրենց իսկ նկարած պատկերները անվանակոչում են անսովոր անուններով ու ստեղծում հետաքրքիր պատմություններ և վերջում էլ նկարում իրենց հորինած սյուժեները: Հաջորդ եղանակը, որ կարելի է օգտագործել կերպարվեստի դասի ընթացքում, հիպերբոլիզացիան /չափազանցում/ է: Այս ձևին բնորոշ է ոչ միայն առարկայի մեծացում կամ փոքրացումը, այլև առարկաների մասերի թվաքանակների փոփոխությունը և տեղաշարժումը, օրինակ՝ 7 գլխանի վիշապը: Դասերի ընթացքում կիրառվող եղանակներից է «սրուն» եղանակը, երբ առարկայի ամբողջ մասից որոշակի մաս առանձնացվում և դարձվում է տիրապետող, օրինակ՝ ծաղրանկարները:

Կերպարվեստի դասը, երբ ուսուցիչն անցկացնում է երաժշտության տակ, երեխաները սկսում են երևակայել ցանկացած հետաքրքիր թեմաներով: Նրանք նկարում են, թե ինչ է խորհում միայնակ ծառը, ինչպես են թափվում անձրևի կաթիլները, ինչեր են հանվում ծովի հատակից, տիեզերքում հանդիպում են այլմոլորակայինների, նկարում են այնպիսի կենդանիների և անվանակոչում, որոնք երբևէ չեն էլ եղել: Ստեղծում են կոմպոզիցիաներ հանձնարարված հանելուկների պատասխանների պատկերներով: Կամ էլ աշակերտները տալիս են ցուցադրվող օբյեկտի աբստրակտ կամ գրաֆիկական լուծումը: Դասի ժամանակ կարելի օգտագործել շնչավորման հնարը, հանձնարարել երեխաներին նկարել «Գաղտնի անտառ», որտեղ նրանք նկարում են ոչ սովորական ծառեր, այլ անպիսի ծառեր, որոնք ունեն քիթ, աչք, ձեռքեր և երևակայությամբ ստեղծեն ծառ-հրեշ, ծառ-թռչուն և այլն: Երեխաները կարող են ստեղծել կերպարներ, երբ ուսուցիչը բանավոր շարադրում է պատմվող կերպարի դիմագծերը: Շատ են այն մեթոդները և հնարները, որոնցով կարելի է և պետք է զարգացնել երեխաների երևակայությունը:

Այսպիսով, ժամանակն է, որ «կերպարվեստ» առարկայի տեղն ու դերը հանրակրթական դպրոցում նորովի ընկալվի ու ընդունվի և, մյուս հանրակրթական առարկաների հետ հավասար, կրի առավել ճանաչողաստեղծագործական բնույթ, որն էլ պետք է սկսել 1-ին դասարանից՝ քայլ առ քայլ: «Կերպարվեստ» առարկան, ընտրելով ոչ ստանդարտ լուծումներ, իրականացնելով աչք - ուղեղ - ձեռք կապը, այնուհետև պետք է զարգացնի գեղարվեստական ընկալումը, երևակայությունը /ֆանտազիան/, ուշադրությունը, դիտողականությունը և տարածական ու գեղարվեստական մտածողությունը: Այն խնդիրները և նպատակները, որ ծառացած է հանրակրթական դպրոցում «կերպարվեստ» առարկայի առջև, պետք է լուծել նորովի, նոր մտահայեցողությամբ, և ինչո՞ւ ոչ, շատ վաղ ավանդույթները վեր հանելով: Հիշենք, որ անցյալի շատ խոշոր մտածողներ կարողացել են հիանալի նկարել: Նկարել իմացել են Կոպեռնիկոսը, Ջորդանո Բրունոն, Լ. Տոլստոյը, Մ. Գորկին, Պուշկինը, Գ. Գալիլեյը, Մենդելևեը, Ֆ. Ֆելլինին, Գյոթեն, Սերգեյ Էյզենշտեյնը, Վարդան Աճեմյանը, Ա. Մոժայսկին, Լերմոնտովը, Գոգոլը, Շևչենկոն, Դոստոևսկին, Հյուգոն, Գոթմանը, Բոդլերը, Էկզյուպերին, Մալկոմսկին, Գ. Լորկան և այլոք: Հայտնի ավիոկոնստրուկտոր Ա. Ս. Յակովլևը ասել է. «Ես շնորհակալ եմ դպրոցին: Այնտեղ լավ հիմքերի վրա էր դրված նկար-

չությունը: Հետագայում ինձ շատ օգնեց նկարելու ունակությունը: Չէ որ, երբ ինձեները կամ կոնստրուկտորը մտածում է որևէ մեքենայի մասին, նա մտքով բոլոր դետալները պետք է պատկերացնի և կարողանա մատիտով այն վերատադրել թղթի վրա»: Իսկ Գյոթեն գրել է. «Ես երբեք բնությունը չեմ դիտել բանաստեղծական նպատակով: Սկսել եմ նրանից, որ նկարել եմ այն այնպես, որպեսզի ճիշտ և պարզ հասկանամ բնական երևույթները: Այսպես ես քիչ-քիչ բնությունը անգիր սովորեցի իր բոլոր ամենափոքր մանրամասներով, և երբ ինձ այդ նյութը անհրաժեշտ դարձավ որպես բանաստեղծ, այն ամբողջությամբ գտնվում էր իմ տրամադրության տակ»:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Պետրովսկի**, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Երևան, «Լույս», 1977թ.
2. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, 2005թ.
3. **Ք. Մ. Նեմենսկի**, Գեղեցկության իմաստությունը, Երևան, «Լույս», 1987թ.
4. **Ս. Արզումանյան**, Հոգեբանություն, Երևան, 2003թ.
5. Կերպարվեստի առարկայական ծրագիր, Երևան, 2003թ.
6. **Ա. Շ. Вьготский**, Психология искусства. М., 1973г.
7. **Я. Л. Коломинский, Е. А. Панько**, Учителю о психологии детей шестилетнего возраста. М., „Просвещение“, 1988г.

ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ПОЗНАВАТЕЛЬНОГО ПРОЦЕССА В ПРЕПОДАВАНИИ ПРЕДМЕТА “ИЗОБРАЗИТЕЛЬНОЕ ИСКУССТВО”

Т. А. Котолкян

Как для усвоения любого общеобразовательного предмета, так и для изобразительного искусства, требуется выявление, формирование и развитие у учащихся в познавательной деятельности ряда в качеств, в частности, внимания, воображения, наблюдательности, художественного и пространственного мышления.

THE FORMATION AND DEVELOPMENT OF THE SEMANTIC PROCESS DURING TEACHING THE ARTS

T. H. Kotolkyan

As for studying any general subject, also for arts, one must reveal and develop a number of cognitive and notional activities.

Among those activities are attention, imagination, observation, fictional and space thinking.